

Գ Ե Տ Ա Կ Ը

(Պատմուածք)

Ամառնային արձակուրդներին ես գնացել էի Ա
դաւառական քաղաքը՝ ընկերոջս մօտ հիւր:

Առաւօտները մենք յաճախ գնում էինք քաղաքի
շրջակայքը և երկար ժամերով զրօնում: Այլևս կիրճ և
անտառ, դաշտ և հովիտ չեր մնացել, որ մենք այցե-
լած չկինէինք... Մի անդամ գնացել, հասել էինք մի
գետակի մօտ, որի ափերի ամբողջ տարածութեան վրայ
խառնիխուռն թափուած էին ահագին քարեր: Այդաել
նստեցինք՝ քիչ հանգստանալու:

Բարեկամս խորասուզուած մաքերի մէջ, մոայլ,
տխուր նստած էր անխօս: Իմ հարցին՝ թէ որտեղից
են գետի այս ահագին քարերը, նա կարծես քնից
սթափուելով՝ գլուխը բարձրացրեց:

—Այդ քարերը... այդ քարերը... խոր հառաչելով՝
արտասանեց նա մեքենայարար:

—Այդ քարերը... կրկնեց նա,—տեսնում ես այս
գետակը, որի ջուրը հազիւ թէ կարողանայ բանեցնել
մի ջրաղաց,—ահա դա է բանդել, փշել, բերել ապա-
ռածի այդ վիթխարի բեկորները:

—Այժմ դրեթէ մի առուակ է,—շարունակեց նա,
—բայց բաւական է՝ այնտեղ՝ այն լեռների վրայ մի
քանի բոպէ անձրեսի տարափ տեղայ, և այս գետակը
մեծանում, կատաղում, փրփրում է և իր գոռում-գո-
չումով, իր ցասամով ահ ու սարսափ տարածում ամե-

Նուրեք։ Քանի՛ քանի զոհեր է կլանել այս արտաքուստ խաղաղ, խաբուսիկ, բայց երեքմն անողոք, անխիղճ, ահարկու գետակը... Քանի՛ քանի տներ, այդիներ է քանդել նա, աւերել, քար ու աւազով ծածկել, աւերակ դարձրել, ապա նորից հանդարտուել և խաղաղ, անդրր, անհոգ, ինչպէս այժմ, առաջ վագել խայտալով...

Բարեկամս լուեց, նորից ընկղմուեց իր մտածմունք ների մէջ։ Լուռ էի և ես։ Միայն գետակն էր, որ իր զուարթ կարկաշինով վրդովում էր այդ լուսւթիւնը։ Լուռ, խաղաղ էր և մեր ամայի շրջակաքը։ Հեռում՝ լերան լանջի վրայ ընկած էր Ա քաղաքը՝ ամբողջապէս կանաչի մէջ թաղուած։ Հիանալի և գեղեցիկ էր նա։ Սակայն ոչ մի աղմուկ, ոչ մի ձայն չէր բարձրանում այնտեղից։ Նա խաղաղ, ինքնագոհ՝ գեռ նիրհում էր իր գարաւոր քնի մէջ, և գեռ ոչ ոք չէր վրդովում նրա այդ քաղցր քունը։

Ես՝ համակուած ընկերոջս տրամադրութեամբ, լուռ ականջ էի դնում գետակի միօրինակ, բայց անուշ կարս կաշիւնին։ Ինչի՞ մասին էր մտածում բարեկամս, ինչու նա այդպէս յանկարծ փոխուեց, ինչ էր այդ րոպէին նրան տանջում, ծագում էին հարցերը միմիանց յետեւից և մնում անպատճանան։ Վերջապէս ընդհատելով երկար տիրող լուսւթիւնը՝ դիմեցի նրան։

— Ի՞նչ կայ, ինչ անցաւ, որ դու այդպէս տիրեցիր։

— Ես յիշեցի իմ մանկութիւնը և իմ փոքրիկ եղբարը, որ զոհ եղաւ այս գետակին։ Իւրաքանչիւր անդամ սրա մօտով անցնելիս իմ յիշողութեան մէջ զարթնում է այդ ողբերգական անցքը, և այնուհետև երկար, օրեւ րով աչքիցս չի հեռանում իմ եղբօր պատկերը, նրա հայեացը, նրա գունատ դէմքը...»

— Ի՞նչպէս եղաւ, ինչ ունէր եղբայրդ այս կողմերում։

— Ի՞նչ ունէր իմ եղբայրը այս կողմերում, — քո այդ հարցին պատասխանելու համար ես ստիպուած կը լինեմ պատմել քեզ իմ մանկութեան մի էջը...»

Նա նստած տեղից բարձրացաւ, և քարի վրայ կը թշ-
նելով՝ նորից ընկաւ մտածմոնքների մէջ։ Մի քանի
բոպէ մնաց այդպէս լուռ, ապա ձեռքը ճակատի վրա-
յից վերցնելով՝ այսպէս ոկսեց իր պատմութիւնը։

«Ես տասն և մէկ տարեկան էի, երբ հայրս վախ-
ճանուեց՝ թողնելով չորս փոքրիկ որբիկներ մօրս շնորհն։
Անդրանիկը ես էի։ Ապրուստի դրեթէ ոչ մի մի-
ջոց։ Խեղճ մայրս աշխատում էր անդադար. գիշերներ
էր լուսացնում ճրագի մօտ՝ գլուխը կորացրած, ասեղը
արագ-արագ բանեցնելով։ Մեղ կը պառկեցնէր քնելու,
իսկ ինքը նորից կը նստէր իր կարը շարունակելու։ Ա-
ռեղը նրա բանուկ ձեռքերում մի խաղալիք էր կարծես։
Այնքան վարժուել էր նա իր արհեստին։

Ես անկողնիս մէջ պառկած՝ երկար ժամերով լուռ
կը դիտէի մօրս։ Նա թէև տիսուր, թէև վշտով համա-
կուած, բայց մեծ եռանդով կարում էր ու կարում։ Եր-
բեմն-երբեմն նա կանգ էր առնում և ազքերը յառած
մի կէտի վրայ՝ մնում էր անշարժ ու մտախոհ։ Կարծես
ականջ էր զնում անձրևներից յորդացած այս գետակի
խուլ, ահռելի գուռոց ու գլրդիւնին, որ մերթ համսում
էր մեղ, մերթ հեռանում, ձբանում... Յանկարծ նա
սթափուելով՝ նորից շարունակում էր ընդհատած աշ-
խատանքը։ Հանգստութեան րոպէները, պարապ ժամերը
նրա համար չէին ստեղծուած...»

Եւ այդպէս անխօնջ, չարքաշ աշխատանքով նա պա-
հում էր մի ամբողջ ընտանիք, նոյնիսկ ուսում տալիս
մեղ երկուսիս՝ ինձ և եղբօրս։

Նեղութիւններ շատ էր կրում խեղճը։ Նիհարել,
գունատուել էր, բայց և այնպէս ուղողութեան, փոխա-
ռութեան չէր դիմում, սրանրա դուռը չէր բաղխում...
Մեր տան անունը, մեր տան նամուսը որպէս սրբու-
թիւն պահում, պաշտպանում էր նաև Պատահել են, որ
օրերով, շաբաթներով կարի պատուէր չի եղել, — նոյնիսկ

այդ դէպքում նա ձեռք չի կարկառել և ոչ ոքի՛ նաշի՛ դիպել և տան իրերին։ Ո՛չ մի բան, ոչ մի առարկայ մեր տանից հրավարակ չի գուրա բերուել ծախուելու։

Սակայն ինչ որ անզօր էր կորզել մեղանից ծայրաւելով թշուառութիւնը, այդ կարողացաւ անել պարտատիրոջ անգութ ձեռքը։

Հայրս մի փոքրիկ պարտք էր ունեցել, որ հանգուցեալը արդէն վճարել էր, միայն տոկոսի մի մասն էր մնում, որը աճելով հասել էր հարիւր քսան րուբլու։ Մի պատկառելի դումար մեղ նմանների համար...

Հօրս մահուանից անմիջապէս յետոյ պարտատէրը սկսեց պահանջներ անել մեղանից՝ սպառնալով, թէ աճրդի կը հանի մեր ողջ ստացուածքը, եթէ չվերադարձնենք միր տուած փողը...։

Խեղճ մայրս մեր բերանից, շորից կտրելով, ամսէւամիս տանում, վճարում էր նրան մի որոշ տուրք։ Բայց այն շարաբաստիկ պարաքը անհատնելի էր, փոխանակ պակսելու՝ նա օր օրի վրայ աճում էր։ Մայրս անկարող էր վճարել այդ պարաքը։

Յանկարծ մի օր յայտնուեց պարտատէրը մեղ մօտ՝ իր հետ բերելով դատարանական մի աստիճանաւոր և մի քանի այլ անձինք։

Մտան նրանք մեր սենեակը։ Աստիճանաւորը նստեց սեղանի առջև և սկսեց մի-մի զրի առնել մեր կահակարասիքը, մեր դորդերը, մեր կաթսաները...։ Անգութ պարտատէրը ձեռքը ընկած իրերը բերում, դարսում էր աստիճանաւորի առջև...։ Սա էլ լճւու, յօնքերը կիտած՝ մի-մի ցուցակագրում էր...։ Երբ առարկան շատ էր հին, շատ չնշին, նա երբեմն հարց էր տալիս.

—Արժէ միթէ դա էլ գրել։

—Գրեցէք, խնդրում եմ, գրեցէք, —իսկոյն միջամը տում էր պարտատէրը։ Եւ աստիճանաւորը լուռ կատարում էր տիսուր պարտականութիւնը։

Խեղճ մայրս գունատուել, գողում էր ամբողջ մարմնով։ Մենք չորս փոքրիկներս շրջապատած նրան

արտասուալից աչքերով նայում էինք մեղ համար անսովոր, անհասկանալի տեսարանին... Զգում էինք, որ մեղ թալանում, մեղ զրկում են... Մայրս իր թևերը տարածած գրկեց մեղ և այդպէս հրելով՝ բերաւ պարտատիւրով առջև։

—Ա՛ռ... առ... սրանց ևս գրիր, վաճառիր...

Մեղ յետ մղեցին։

—Տար, տար... Սակայն վերեւում Աստուած կայ...

Հազիւ կարողացաւ արտասանել նա և թուլացած ընկաւ մի աթոռի վրայ։

Ընտանեկան բարօրութիւն, ընտանեկան անդորրութիւն... անցաւ, վերջացաւ ամեն ինչ մեղ համար... Սկսուեց ձախորդութիւնների մի երկար շարք։

Խեղճ մայրս թէև դարձեալ շարունակում էր աշխատել, բայց նրա եռանդը, աշխոյժը նուազել, չքացել էր, ոյժերը պակասել։ Նրան աշխատանք պատուիրող ները անբաւականութիւն էին յայտնում, թէ կարը այնքան էլ լաւ, այնքան էլ նուրբ չէ։ Մայրս սովոր չէր այդպիսի նկատողութիւնների. այդ նրան աւելի ևս ջղային էր դարձնում։ Նկատողութիւններին նա պատասխանում էր դժոխութեամբ, յաճախ կոպտութեամբ...։

Պատուէրները սկսեցին կամաց-կամաց պակասել, յետոյ բոլորովին ընդհատուեցին։ Այդպիսով սպառուեց և մեր ապրուստի միակ աղբիւրը...։

Սրտի կսկիծով մայրս գուրս բերաւ մեղ դպրոցից։ Փող չկար մեր օրուայ պարէնը հայթհայթելու, ուր մը նաց, որ կարողանայինք ուսման վարձը և դասական պիտօքները հոգալ։

Ցուրտ ձմեռ էր։ Տանը հչ փայտ և հչ էլ ալիւր... օրերով, շաբաթներով կարօտ էինք տաք կերակրիւ։

Ստիպուած դիմում էինք հարեւաններին փոխառութեան... Ինչից սարսափսւմ էր մայրս, տեղի ունեցաւ։ Փոխառութիւնն է ասելու։ Գնալ, բաղիսել

սրանրա դուռը, սպասել, մինչև որ կը բանան... Այդ-
մի քանի վայրկեանը մի անհօնութիւն է թում: Դու-
ռը բանում են... իսկ քո սիրտը տրոփում է, արագ-
արագ զարկում... կակազելով, կարմրելով յայտնում ես
մօրդ խնդիրը և սպասում պատասխանի... յաճախ բա-
ցասական:—«Մօրդ ասա, մենք էլ չունենք»... Ամօթա-
հար, գլխակոր, երեսդ յետ ես դարձնում, շտապում
տուն... Քեզ թւում է, թէ սնցորդները դուշակում են
ձեր ծայրայեղ թշուառ դրութիւնը... Գալիս ես տուն-
թոյլ ոսքերով, կոտրուած սրտով: Փաքրիկները լուռ-
նայում են քո այլայլուած դէմքին, հասկանում են ա-
մեն ինչ և թէև քաղցած՝ լուռմ են դարձեալ:

Մի անդամ, — ես երբէք չեմ մոռանայ այդ օրը,—
տանը ոչինչ, ոչինչ չկար, բառիս բուն նշանակութեամբ:—
Ո՛չ ալիւր, ոչ պանիր, ոչ նոյնիսկ մի կտոր հաց... Մայ-
րըս ինձ ուղարկեց մի երկու աղդական տներ հաց փոխ
բերելու: Գնացի մի տուն. չեղաւ: Մի երկարդ տեղ-
նոյնպէս չեղաւ: Բաղիսեցի մի երրորդ, վերջապէս և մի
չորրորդ դուռ. դարձեալ մերժեցին: Վերադարձայ տուն-
ուժասպառ, գունատ, սառը քրտինքը երեսիս...

Մայրս ձեռքերը կրծքին ծալած, կանդնած էր
դուրս՝ դարբասի մոտ:

— Զգտար, — հարցրեց նա մտամոլոր և մեքենայա-
բար:

— Ո՛չ, — արտասանեցի ես հազիւ լսելի ձայնով և
արտասուքս զսպելով մտայ մենեակը:

Երեկոյեան սոված, անօթի, ցաւ և վիշտ սրտներիս-
վրայ ծանրացած՝ պառկեցինք քնելու... Երկար, երկար
մտատանջութեան մէջ էի ես ընկած... չէի կարողանում
քնել... Քնած չէր և մայրս: Երբեմն-երբեմն նա խոր
հառաջ էր քաշում... և լուռ արտասուռմ...

Թէև տասն և չորս տարեկան էի ես... սակայն չէ
որ անդրանիկը... տան մեծը... տան տղամարդն էլ-
ես, կարիքը ստիպում էր, որ ես մտածեմ ոչ իմ տարի-
քին համապատասխան հարցերով: «Ես պիտի հոգամ, ես

պիտի տանեմ տան ամբողջ ծանրութիւնը և ոչ այն խեղճ, վշտի ծանրոցի տակ կորացած, վաղաժամ ծերացած կինը»... մտածում էի ես Մեր ընտանիքի ամբողջ վիշտը այժմ ինձ վրայ էր ծանրացած, երկու փոքրիկ բայրերիս գոնատ, ճնշուած դէմքերը, նրանց լուռ, անխօս հայեացքները այժմ ինձ վրայ էին ուղղուած, ինձանից էին կարծես օգնութիւն հայցում... Սակայն ինչ կերպ, ինչ միջոցներով՝ Ահա մի հարց, որ ես ժամերով աշխատում էի լուծել, բայց իմ բոլոր երազները լինում էին անիրազործելի: Մուրացկանութեան դիմել... Օհ, ոչ Սպասաւորութիւն անել... Երբէք... Ի՞նչ անելուրեմն...

Ես վճռել էի փայտահատ դառնալ: Մայրս այդ լսել անգամ չկամեցաւ:

—Երբէք... Ո՞վ գիտէ՛ քեզ ինչ պատահի ճանապարհին... ապա այնտեղ՝ անտառում... միայնակ... փոքրիկ... Աւելի լաւ է սովից մեռնենք, քան ես աչքերըս բաց-բաց գլուխդ վտանգի ենթարկեմ... Օհ, ոչ...

Սակայն մի քանի օր յետոյ խեղճ կինը յուսահատութեան դուռը հասած՝ վերջիվերջոյ իր համաձայնութիւնը տուաւ: Մենք պայմանաւորուեցինք մեր հարեւնի հետ՝ արդիւնքի մի մասը նրան խոստանալով և վերցըրինք նրա ձին:

«Եւ ես միւս օրը, վաղ առաւտեան, դեռ լոյսը չծագած, արդէն ոտքի վրայ՝ ճանապարհորդութեանս պատրաստութիւններն էի տեսնում: Զին նստեցի, մօրս մնաս բարով՝ ասելով՝ ճամբայ ընկայ: Աղօթքներ մըրմիջալով՝ նա ինձ երկար հետեւում էր: Ինչե՛ր է մտածել խեղճը, ի՞նչ ապագայ է երազել ինձ համար, ի՞նչ ամրոցներ կառուցել... իսկ այժմ ուր է ինձ ուղարկում:

Դուրս եկայ քաղաքից, ընկայ դաշտերը: Նեղ շաւով գնում էի միայնակ: Երկինքը ամպամած, հեռու լեռները մշուշապատ, թանձր մառախուղի միջից հազիւ էին նրանք նշմարում... Օրը մռայլ էր... բայց իմ սիրտը զու-

արթ, մի անսովոր ուրախութեամբ և արիութեամբ լըցուած։ Ես ինձ զգում էի մի հասունացած, մի կատարեալ երիտասարդ...

Այն միտքը, որ ես առաջին անգամ աշխատանքի եմ գնում և իմ այդ աշխատանքով ես կարող կը լինեմ վերջ դնել մի ամբողջ ընտանիքի թշուառութեան... դա ինձ մի առանձին լրջութիւն էր տուել։ Ես կարող կը լինեմ ոչ միայն նրանց ապրուստը հայթհայթել... այլև ուսում, կրթութիւն տալ փոքրիկ եղբօրս, քոյրերիս... Խնչե՞ր չէի մտածում, ինչե՞ր չէի չափում, կտրում... եւ այդ ամենը դիտե՞ս ինչով.—անտառից բեռլը բեռլը փայտ բերելով և վաճառելով։ Այսպէս ոգեստուած, անհուն եռանդով լցուած, անուրջների մէջ ընկած՝ ես աննշկատելի կերպով հասայ անտառը...

Այսպէս սկսուեց իմ աշխատանքը։ Յուրա ձմեռն, ամառնային կիզիչ ճառագայթներն ինձ արգելը չէին հանդիսանում... Միակ երկիւղը, միակ վտանգը ահա այս գետակն էր, որտեղով ես անցնում, դառնում էի։ Յանձարանին է, որ անձրեների տակ եմ ընկել, նոյն իսկ հեղեղի հանդիպել։ Ստիպուած՝ ժամերով սպասել եմ, որ հեղեղը դադարի, ապա սիրտ եմ արել մտնել գետը և մեծ դժուարութեամբ, մի կերպ, անվնաս անցել միւս տվիը...

Ահ ու սարսափի ժամեր էին դրանք. մայրս այնտեղ՝ փողոցում կանգնած, իմ ճամբին անհամբեր սպասելիս, իսկ ես գետի միւս ափին՝ թրջուած, դժգոյն, աջք յառած հեղեղին, բոպէներ եմ համարում, թէ երբ պիտի հանդարտուի, մեղմանայ ընութեան տարերքի այդ ցասումը։ Բայց նա անողոք, դոռում, մոնջում է, ահագին ապառաժներ միմիանց յետեկից բերելով՝ իւրար այնպէս զարկում, որ ողջ գետինը իմ ոտքերի տակ շարժում, երերուում է...

Սակայն չնայած այդ վտանգին, ես շարունակում էի գնալ։ Այլ կերպ չէի կարող. այդ էր մեր ապրուստի միակ աղքիւրը...

«Ինձ հետ երբեմն-երբեմն գալիս էր և իմ փոքրիկ եղբայրը՝ ինձ օդնելու Բայց նրա այդ օդնութիւնը մեզ շատ թանգ նստեց»

Վերջին անգամ երկուսս միասին մեկնելիս մի պարզ գեղեցիկ գարնանային առաւօտ էր Սակայն կէսօրին եղանակը փոխուեց Երկինքը ծածկուեց սեսեւ ամպեւ բով, բարձրացաւ սաստիկ հողմ Մենք շտապ-շտապ վերջացրինք մեր գործը, հաղիւ ճանապարհ էինքը ընկեր, որ ահա անձրեք սկսեց խոշոր կաթիլներով թափուել Նա կամաց-կամաց սաստկացաւ և տեղի տուաւ կարկը տախառն տարափի... Թրջուած, լճւու, անխօս մենք շարունակում էինք մեր ճանապարհը... Երբեմն-երբեմն մեր ականջին գալիս հասնում էր մի խուլ, ահարկու դղըրդինք Դա գետն էր կատաղել... Դնալով-գնալով՝ դղըրդինը աւելի սաստկանում, աւելի ուժեղանում էր Մենք դարձեալ լուռ, իրար ոչինչ չէինք ասում... և շարունակում էինք առաջ ընթանալը Ես իմ մասին չէի մըս տածում. Ես սովորել, արդէն ընտելացել էի այս գետակի դժութիւններինք Իմ դարդը, իմ հոգսը փոքրիկ եղբայրս էր, որ տիսուր, գունատ գնում էր ինձ հետ միասին ձիու յետեկից»

Նա շատ էր լսել այդ հեղեղների հասցրած վնասների մասինք Բայց երբեք չէր տեսել Այժմ նա շուտով պիտի ականատես լինէր, ինքը ևս պիտի անցնէր նրանց միջով Մենք արդէն պարզ կերպով լսում էինք գետի աղաղակը, ահուելի վշշոցը Ես ընդհատելով լրութիւնը՝ սկսեցի փոքրիկին սիրտ տալ, քաջալերելու...

Հասանք գետի ափը Սև, մռայլ վազում էր հեղեղը կատաղած, խենթացած»

Մենք ձիու բեռը իջեցրել, սպասում էինք...

Իրիկնադէմին ջուրը քիչ պակասեց»

Ամին խմբուած ճամբորդները կամաց-կամաց անցընում ենք Մենք էլ ձին բռնեցինք Երեսներս խաչ հանելով՝ մտանք գետը Ջուրը ցրուած էր մի քանի ճիւղերին Անցանք մի երկուաը, մնում էին երեքը, ամենա-

կատաղին հէնց մեր առջևն էր։ Ես եղբօրս նորից քա-
ջալերում, նորից կրկնում եմ, որ երբէք հոսանքի չը-
նայի։ Զին մտնում է, մենք էլ նրա յետևից։ Զուրը դը-
րեթէ մեր գօտկատեղին էր հասնում։ Հազիւ մի քանի
քայլ էինք արել, որ ահա մի քար գալով՝ սաստիկ ոյ-
ժով դիպաւ ոտքիս։ Ես ընկայ, բայց իսկոյն կանգնեցի։
Հէնց այդ րոպէին եղբայրս մի սուր ճիչ արձակելով՝
վայր գլորուեց... Ես բռնեցի նրա ձեռքից, որ կանգնե-
ցընեմ... Բայց մի ալիք վրայ հասնելով՝ ինձ ես տա-
պալեց, բշեց, տարաւ...

Այնուհետև թէ ինչ եղաւ... Ես այլես ոչինչ չեմ
յիշում... Երբ ես ուշի եկայ, ինձ տեսայ շրջապա-
տուած մի խումբ ճամբորդներով... Իսկ կողքիս... եղ-
բայրս՝ գլուխը պատուուած, անշնչացած ընկած էր...
Թրջուած ցնցոտիները հազիւ էին ծածկում նրա նիհար
մարմինը... Քիչ դէնը կանգնած էր մեր ճին առանց
բռնի՝ գլխակոր, տրտում... Տիսուր ու լուռ էին և այն
մի խումբ մարդիկ... Լուռ, խաղաղ էր և գետակը...
Ես ապշած նայում էի և չէի կարողանում ինքս ինձ հա-
շիւ տալ...

Հէնց այդ միջոցին մի կին՝ խելակորոյս, մազերը
գզգզուած, ճշալով, վազէվազ գալիս էր դէպի մեզ...

«Վայ ինձ... այս ինչ կրակ էր, որ մազուեցաւ իմ
գլխին... աղեկոտուր ճիչ արձակելով՝ փռուեց նա եղ-
բօրս դիակի վրայ...»

Մայրս էր...

Իմ բարեկամն ընդհատեց իր պատմութիւնը։ Գլու-
խը յենելով ձեռքերի վրայ՝ մնաց լուռ։ Արտասուզի եր-
կու խոշոր կաթիլներ ցոլացին նրա աչքերից...

Գետակը դարձեալ ուրախուրախ կարկաչում էր...